ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 2 >> հոկտեմբեր 2016թ. N 69 - Ա
ք. Արմավիր

ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջներով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնում, քարտուղարության ընդհանուր բաժնում, վարչատնտեսական բաժնում և ընտանիքի, կանաց և երեխաների պաշտպանության բաժնում անցկացնել 2016 թվականի բյուջետային տարվա գործունեության աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին (պետի պաշտոնակատար՝ Վ.Խաչատրյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել աուդիտ անցկացվող բաժինների պետերին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին (պետի պաշտոնակատար՝ Վ.Խաչատրյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 21 աշխատանքային օրյա ժամկետում:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ